# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն

Լիճք բնակավայր 28.10.2025 թ.

2025 թվականի հոկտեմբերի 28-ին՝ ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Լիճք հանքային ջրերի գործարան» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Լիճք բնակավայրում ածխաթթվային հանքային ջրերի գործարանի կառուցման և արտադրության կազմակերպման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ Լիճք բնակավայրի վարչական ղեկավար Ս. Սիրականյանը, այնուհետև խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանին: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նա նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, կազմել է բնապահպանական կառավարման պլան, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները:

Հարությունյանը նշեց, որ Օրենքի պահանջով կազմակերպվել է հանրային 2-րդ լսում, որի նպատակն է ազդակիր բնակավայրին և այլ շահագրգիռ անձանց մասնակից դարձնել փորձաքննության գործընթացին և լսել նաև նրանց կարծիքները: Նա նշեց, որ օրենքով սահմանված կարգով հանրային 2-րդ լսման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթում, ծանուցվել է համայնքի ղեկավարին՝ բնակիչների շրջանում իրազեկում կատարելու նպատակով: Ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա

միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող աշխատանքները:

Նախաձեռնողի բնապահպանական մասի պատասխանատու Արամայիս Ավագյանը նշեց, որ գործարանը կառուցվելու է միջազգային ստանդարտներին համապատասխան, հնարավորինս նվազեցնելով շրջակա միջավայրի վրա առաջացող ռիսկերը: Նա մանրամասն ներկայացրեց նախատեսվող գործունեության ընթացքում բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, հողի հետ կապված: Նա նշեց, որ բոլոր ազդեցությունների համար մշակվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ, օրինակ, պարբերաբար իրականացվելու է ջրցան, իրականացվելու են աղմուկի մակարդակը նվազեցնող միջոցառումներ և այլն: Տեղադրվելու է կենսաբանական մաքրման կայան, որը կեղտաջրերի մաքրումն իրականացնելու է 98 տոկոսով: Ներդրվելու է ջրի շրջանառու փակ համակարգ, որը հնարավորություն կտա որոշակիորեն խնայել ջրային ռեսուրսները:

Նախաձեռնողի ներկայացուցիչների կողմից նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելուց հետո խոսքը փոխանցվեց ներկաներին: Մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ Մարատ Ղուրշուդյանը հարցրեց մուտքի և ելքի ճանապարհների վերաբերյալ, ինչին ի պատասխան Գ. Հակոբյանը պատասխանեց, որ նախագիծը կազմվել է քաղաքաշինական նորմերի և ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերին համապատասխան: Մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ Դավիթ Զանգեզուրյանը հարցրեց մաքրման կայանից դուրս եկող կեղտաջրերի հեռացման վերաբերյալ, ինչին ի պատասխան նշվեց, որ տաք սեզոնին մաքրված կեղտաջրերը կօգտագործվեն ոռոգման նպատակով, իսկ ոռոգման սեզոնից դուրս կուղղվեն դեպի Լիճք գետ: Նշված հարցի վերաբերյալ Հարությունյանը նշեց, որ ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսվել է, որ ավելացած մաքրված կեղտաջրերը հեռացվելու են «Մարտունի համայնքային կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից, վերջինիս հետ պայմանագիր կնքելուց հետո: Հարությունյանը նշեց, որ չի կարող լինել անհամապատասխանություն ՇՄԱԳ հաշվետվության և կատարվելիք գործողությունների միջև և որ անհրաժեշտ էր ՇՄԱԳ հաշվետվությունում նշել այն միջոցառումները, որոնք իրականացվելու են գործնականում:

Հարությունյանը նշեց, որ կան չպարզաբանված հարցեր, որոնք անհրաժեշտ է հստակեցնել: Նա նշեց, որ կա անհամապատասխանություն մաքրման կայանի տարեկան արտադրողականության և առաջացող կեղտաջրերի քանակների միջև, ինչին ի պատասխան ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ հնարավոր է վրիպակ է եղել:

Հաջորդ հարցը վերաբերում էր կենսաբազմազանության գործիքային չափումներ իրականացնելուն, որը նշված է ՇՄԱԳ հաշվետվությունում: Այս հարցին ևս տրվեց պարզաբանում, որ տեղի է ունեցել վրիպակ:

Հարությունյանը անդրադարձավ նաև Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի 2Ր հորատանցքի շահագործման համար 2019 թվականին ստացված պետական փորձաքննական դրական եզրակացությանը և աշխատանքների իրականացմանը, ինչին ի պատասխան նշվեց, որ ձեռք է բերվել լիցենզիա, ընդերքօգտագործման իրավունք, սակայն աշխատանքներ չեն իրականացվել: Նշվեց նաև, որ ընկերությունը հորատանցքի նկատմամբ իրավունքը ձեռք է բերել 2021 թվականին և մինչ այդ նախկին տնօրինողները արդյունահանում չեն իրականացրել: Հարությունյանը նշեց, որ 2019 թվականին ստացված եզրակացությունը ուժը կորցրած է համարվում, եթե աշխատանքները չեն մեկնարկել: Հակոբյանը նշեց, որ քանի որ արդեն ստացվել է լիցենզիա և ընդերքօգտագործման իրավունք, ապա եզրակացությունը չի կարող համարվել ուժը կորցրած և դա ճշտելու համար իրենք կդիմեն իրավաբանական վարչությանը: Հարությունյանը նշեց, որ իրավաբանները ավելի ճշգրիտ կպատասխանեն այդ հարցին:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու համար:

Վարչական ղեկավար Ս. Սիրականյանը նշեց, որ ընկերությունը պարտավորվել է աջակցություն ցուցաբերել համայնքին և արդեն իսկ որոշակի օգնություն է ցուցաբերել: Հարց հնչեց համայնքի օգուտների, բնակիչների աշխատանքով ապահովման վերաբերյալ, ինչպես նաև «Լիճք» հանքային ջրի գնի և մատչելիության վերաբերյալ, ինչին ի պատասխան Հակոբյանը նշեց, որ գործունեության ընթացքում անընդհատ կապի մեջ են լինելու համայնքի ղեկավարության հետ, մասնակցելու են տարբեր ծրագրերի իրականացմանը և գործարանի աշխատակիցների մեծ մասը լինելու են ազդակիր բնակավայրից, իսկ ինչ վերաբերում է հանքային ջրի մատչելիությանը դա կախված է տեղական շուկայից և մրցակցությունից:

Բնակիչներից մեկը նշեց, որ կցանկանար, որ արագ կազմակերպվեր գործընթացը և արդյունքում գյուղը և գյուղացիներն օգուտներ ստանային:

Մյուս բնակիչների կողմից հարցեր չհնչեցին և Հարությունյանը ամփոփելով հանրային լսումը՝ շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, Գեղարքունիքի մարզպետարանի, Մարտունի համայնքի ներկայացուցիչներ, Լիճք բնակավայրի վարչական ղեկավարը, բնակիչները, ընկերության տնօրեն Լյո Ծիքունը և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

Վարող և քննարկումների պատասխանատու՝ Հարությունյան

«Լիճք հանքային ջրերի գործարան» ՍՊԸ-ի տնօրեն Լյո Ծիքունից

«Լիճք հանքային ջրերի գործարան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ. Հակոբյան